

ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵԳԵԼՆԵՐԸ ՀԱՎՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հեգմանքը երգիծանքի դրսևորման կարևորագույն միջոց է: «Հեգմանք» տերմինը առաջացել է հունարեն *eironeia* բառից, որը նշանակում է «քողարկված ծաղր»: Հեգմանքը կիրառվում է առավելապես երգիծական ստեղծագործություններում, ինչպես և այլ գրական ժանրերում:

Հակոբ Պարոնյանի ստեղծագործություններում հեգմանքը կիրառված է մեծ վարպետությամբ ու նպատակալաց: Այն ուղղված է առօրյա կենցաղի մեջ եղած թերությունների, մշակութային, հասարակական-քաղաքական և ազգային այլևայլ արատների դեմ: Առաջին իսկ ստեղծագործություններում երևում է գրողի աշխարհընկալման առանձնահատուկ ակտիվությունը: Գրական ասպարեզ մտնելով քաղաքական անբարենպաստ պայմաններում, երբ մոլեգնում էր կեղծիքն ու սուտը, գրողը հավատարիմ մնաց իր անկեղծությանն ու ազնվությանը և հավաստեց ճշմարիտ ապրելու և պայքարելու իր դավանանքը:

Հեգմանքի հիմնական միջոցը ձևի և բովանդակության անհամապատասխանության ստեղծումն է, որով առավել ցայտուն են դառնում բնութագրվող առարկան, երևույթը: Առարկաներին, երևույթներին, կերպարներին վերագրվում են այնպիսի հատկանիշներ, որոնցից դրանք զուրկ են: Բնորոշելով առարկան, երևույթը չունեցած դրական հատկանիշներով՝ ընդգծվում է դրանց բացակայությունը: Առաջանում է ծաղր, որը կարող է լինել և՛ մեղմ, և՛ թունոտ, և՛ արհամարհական: Հակոբ Պարոնյանը Վահան Պարտիզակցուն նկարագրում է հետևյալ կերպ. «1850-ին Պարտիզակ ծնած է Վահան վարդապետ, երեսփոխան, քատերերգակ, առակախոս, այցելու և պատվիրակ Բարձր Հայաստանի: Այնչափ բարի զավակ մ' էր, որ իր ծննդեհեն երկու ամիս առաջ հայրը մեռավ, յուր տղուն երեսը չտեսնելու համար. երկու ամիս ետքն ալ մայրը հոգին փչեց՝ յուր զավակին երեսը տեսած ըլլալուն համար»¹: «Պեշիքթաշցին այն աստիճան քաջասիրտ է, որ չորս պեշիքթաշցին կարող է մեկ մուկի դեմ կռվելու»²: «Ասկեց ի զատ տնտեսական գիտության այնքան հմուտ է, որ անոթութենն մեռնելու կետն ալ հասնի, դարձյալ իր յոթ ֆռանք ամսականեն ստակ մը չվատներ. այո՛, այո՛, պետք է որ իր գովեստը ընեն»³:

Բազում արժանիքներ վերագրելով հերոսին՝ ցույց է տալիս նրա ներքին սնանկությունը: Նման հակադրությունը հեղինակի համոզարեղ գրչի տակ ստանում է մեծ արտահայտչականություն: Հեղինակի խոսքը հեգմական բնույթ է ստանում ոչ միայն բառերի, այլև նախադասությունների, ամբողջ պատկերի նկարագրությամբ: «Այս և յուր շինած ուրիշ քանի մը շենքերն այնչափ արհեստով և գիտությամբ կա-

¹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 149:

² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 129:

³ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 19:

ոուցված են, որ զանոնք դիտողը կը հիանա և ինքն իրեն կը հարցունե թե՞ արդյոք Բարիզե՞ն բեռն տված են այս շենքերը...»⁴։ «Մարդությունն այնքան կը սիրե, որ ձեռները չաղտոտելու համար ուլիշին մատներովը կը քննե գլուխը, բայց ասնն ատեն ուրիշին ծանծրություն չպատճառելու համար՝ յուր քթամատը միայն գործածել սկսած է մեղքերս։ Եթե հարկ ըլլա ձեռները լվալ՝ դեղագործներեն գտված ջուր կ'օգտուի։ Եթե անպակի մաքրություն մտայնա յոյժ որոյին սեպ ունենար չէր կրնար այս դարուս մեջ ապրիլ, բայց քանի որ ձեռներու մեջ է, վնաս չունի»⁵։

Հեզմանքը դրսևորվում է ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքում։ «Մեծապատիվ մորացկաններ» վիպակում Աբխաղով աղան իր հայրենասեր լինելը ցույց տալու համար բվարկում է իր ունեցած արտերը, եզները, կովերը. «Շատ լավ, իմ անունս ալ գրեցեք, ես ալ պատվավոր ազգային մ'եմ։ Մեր քաղքին մեջ արտերու, եզերու, կովերու և ագարակներու տեր եմ...»⁶։ Նման բվարկումով, ինչպես և «պատվական» բառով Պարոնյանը հեզմում է հարուստ Աբխաղով աղայի տգիտությունը, հայրենասիրության նրա ըմբռման սնանկությունը։ Հեղինակի հեզմանքը հաճախ սուր բնույթ է կրում և վեր է ածվում սարկազմի։ Ինչպես. «Խորեն չուշացավ հայտնել, թե յուր ծնունդովն քանաստեղծ մ'ալ ավելցավ ազգին և ոչ թե փորձանք, ինչպես կը գուշակեին քանի մը հեռատես մարդեր. վասնզի երբ մանկաբարձն անոր ռտներուն վրա դիտողություն կ'ըներ, տասնևվեցույան ոտանավորներն միշտ այսպես կը վերջանան, պատասխանեց երեխա քանաստեղծն, որ ազգային քերթող պիտի հորջորջվեր օր մը մեր ազգային համբակ... սափրիչներն»⁷։

Սարկազմի՝ պատկերավոր և դիպուկ օրինակների հանդիպում ենք նաև հերոսների խոսքում, որը երբեմն հանդես է գալիս երկխոսությունների ձևով.

«... Բայց քարոզությամբ չկրնալով ապրիլ, կսկսի հրաշագործության։ Կաղեր, կույրեր, համբեր, այսահարներ, անդամալույծներ կը բժշկեր։ Ամեն օր հիվանդներ կերթային իրեն։

— Հա՛յր սուրբ, իմացանք, որ դուք ամեն ցավերը կը փարատեք։

— Հարմար եղբ, հոգեհոգեք։

— Բանի մը շաբաթն ի վեր գլխու ցավ ունիմ, կ'ուզեմ, որ փարատեք։

— Գլո՞ւխդ, թե ցավդ։

— Գլուխս, հայր սուրբ, գլուխս։

— Շատ լավ, ինձի համար երկուքն ալ միևնույն բանն են։ Եկուր խաչահան-գլխաւ մը ընեն։

Մարդը կը մեկնի և քանի մը ժամեն ետքը անդիի աշխարհըը կ'երթա։ Երկրորդ մը կը ներկայանա.

— Հա՛յր սուրբ, սենյակին պատուհանը կտրեցալ։

— Պատուհանը ի՞նչ բեր, վրան բժշկության ավետարան մը կարդամ։ Երրորդ մը.

— Հա՛յր սուրբ, մագերս կը թափվին։

— Այս ջուրով գլուխդ լվա՛։

Չորրորդ մը կը մտնե.

— Հա՛յր սուրբ, անձրև եկած օրը սենյակս կվազե, ի՞նչ ընեմ։

— Այս ջուրեն քիչ մը դի՛ր սենյակիդ վրա»⁸։

Հակոբ Պարոնյանը ծաղրում է իր ժամանակաշրջանի բժշկությունը, սարկաստիկ երանգներով մերկացնում։ Հեզմական մեծ որակ և իմաստային տարողուն-

⁴ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 227։

⁵ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 104։

⁶ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 11։

⁷ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 9։

⁸ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 68։

կություն է ստացվում, երբ որոշ մասնագիտություն կամ պաշտոն ունեցող անարժան անձանց հեղինակը օժտում է խիստ փայլուն ու դրական մականուններով՝ դրանով շեշտելով նրանց կոչման ու էության հակասությունը, անհամապատասխանությունը: Այսպես՝ «Պաղտասար աղպար» պիեսում հեղինակը դատավորների անվանում է Սուր, Երկաթ, Փայլակ: Մինչդեռ նրանք չունեն ոչ մտքի սրություն, ոչ կամքի ամրություն, ոչ էլ փայլուն տրամաբանություն: Ընկերությունները կրում են «Օժանդակ», «Համակամ» անունները: «Օժանդակ», որը ոչ թե օժանդակում է ինչ-որ գործի, այլ ընդհակառակը՝ խանգարում, խոչընդոտ է հանդիսանում: «Համակամ» ընկերություններ, որոնք ոչ թե համակամ են եղել, այլ տարամիտ ու անհամերաշխ, որոնց նպատակը եղածը կործանելն է:

Պարոնյանը գործածում է բառեր, որոնք իրենց նպատակային ու դիպուկ կիրառությամբ ծիծաղ են շարժում: Կան բառեր էլ, որոնք տվյալ իմաստը ձեռք են բերում տվյալ համատեքստում, տվյալ բառային շրջապատում:

Օրինակ՝ «Մյուս կողմեն Մանգունեն հապճեպով հազվեցավ յուր պատերազմական հագուստները, զգեցավ գրահն՝ ուսկից արևուն ճառագայթները չեն կրնար քափանցիլ, առավ յուր զենքերն, որ կը բաղկանային ավանակ, էշ, լիբր, ոճրագործ, անանոթ բառերև և հետևյալ ատենաբանություն ըրավ. դողացե՛ք ոտներուս տակ, ով գուլպաներս: Այս ատենաբանութենեն ետքը վերջին ողջույնը տվավ յուր սենյակին այնպիսի սրտաճմլիկ խոսքերով, որ լալ սկսան բարձերն ու բազմոցները: Վերջին ողջույնը տալեն ետքը մտրակեց յուր կռիկները և պատրաստվեցավ յուր ոսոխին դենն ելնելու»⁹: Կամ՝ «Ո՛չ նարտ կը խաղան և ո՛չ թուղթ. գիշերները գոսաճքի կամ մարմնամարգոթյան համար երբեմն իրենց կիները կը ծեծեն»¹⁰:

Հեզմանըք նաև առաջանում է բառերի՝ միտումնավոր կերպով սխալ ոճական կիրառությամբ: Գիտական ոճին բնորոշ բառերը օգտագործվում են խոսակցական առօրյա ոճում կամ՝ ընդհակառակը:

Ինչպես՝ «Գրիգոր Արծրունի, թատրոնապետ, ինդուկտիվ խմբագիր դերուկտիվ Մշակի...»¹¹: «Մափրիչն ատենական գործողությունները կատարելեն ետքը կը սապոնե յուր նոր հաճախորդն և կը դիմե յուր զենքերուն»¹²: Հերոսների խոսքում: «Ապրանք մ՝ որ հագար անգամ իսկ եթե լվացվի, չփոխեր յուր գաղափարը:

— Սկզբունքի տեր ապրանք մը»¹³:

Հեզմանյան որոշ արտահայտություններ ստեղծվում են մակդիրների միջոցով: Պարոնյանի երգծածանքը ներգործության մեծ ուժ է ստանում շնորհիվ խիստ դիպուկ մակդիրների: Օրինակ՝ «Իբրև երեսփոխան ալ ազգին ծառայած է. երկաթյա ականջ ունենալու է մեկը, որ դիմանա անոր ատենաբանություններուն»¹⁴: «Փողոցի մեջ այնպիսի սիգաճեն քայլվածք մ՝ ունի, որ մարդս կը վախճա անոր ետևեն երթալու, իբրեմ սպասավորն չկարծվելու համար»¹⁵:

Նվագափաղաքչական նշանակություն արտահայտող բառերի առատ գործածությունը առավել ակնառու է դարձնում իր հեզմական, հաճախ զավեշտի հասնող ծաղրական վերաբերմունքը տվյալ կերպարի նկատմամբ: «Ատանաբույժմ արևելյան» կատակերգության մեջ Թափառնիկոսը արհամարհում ու դավաճանում է իր կնոջը, որի հետ ամուսնացել էր փողի համար: Գիշերային խրախճանքից հետո տուն վերադառնալով՝ կնոջը դիմում է այսպես. «Բարև, անուշիկս» կամ՝ «Ինչո՞ւ համար առանձին նստեր ես, նոնռչիկս»¹⁶:

⁹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 88:

¹⁰ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 210:

¹¹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 159:

¹² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 260:

¹³ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 274:

¹⁴ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 204:

¹⁵ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 171:

¹⁶ Հ. Պարոնյան, հ. 4, էջ 434:

Գրողի կատակերգությունները հարուստ են այնպիսի բառերով, ինչպես՝ «անուշիկա», «նոնշիկա», «տոտոշիկա», «աղվորիկ մը», «համբուրիկ մը» և այլն:

Ըստ որում, որքան մեծ է բառերի նրբիմաստների և նրանց կիրառության կեղծության ու գոհակության հակադրությունը, այնքան մեծ է երգիծանքի ներգործության ուժը, այնքան նպատակային է այն: Սա մեծ երգիծաբանի վարպետության միջոցներից է:

Պարոնյան երգիծաբանը տգետ մտավորականներին, անտաղանդ պոետներին ու անարժան պաշտոնյաներին ներկայացնում է չափազանց գովասանքով, վերամբարձ ոճով, որը հաճախ հասնում է ճոռոմաբանության: Այս հնարանքը հանդիպում է և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում:

«Ինչո՞ւ կը քնանաք, ո՛վ պոետներ, որ երկու հանգ գտնելու համար Պարոնյան կը շրջապատեք...: Ինչո՞ւ կը խորդաք, ո՛վ գրագետներ, որ ձեր հրաշագործ գրիչն երբ մարդու դպցունեք՝ կենդանիի կը փոխարկեք զայն և երբ անասունի զարնեք՝ մարդու կայափոխեք: Արքցեք, ի ծուրը իջեք, բացեք ձեր գլուխներն, որպեսզի ամեն մարդ տեսնե անոնց ունայնությունը...»¹⁷:

«Ո՛վ հառաջդիմություն, հայությունդ պոչդ կախած գետնաբարձ ո՞ր կը տանիս, այդպիսի հապճեպով դեպի ո՞ր կը դիմես. մի՛, մի՛ այնքան շուտ վագեր, վասնզի բեռդ ծանր է, կը հոգմիս և ճամբու վրա կը մնաս, և հայությունը կռնդի վրա կ'իյնա... պոչ ի ձեռին»¹⁸:

Հեգմական իմաստի դրսևորման միջոց են դառնում նաև հեղինակի կողմից հմտորեն գործածվող հնաբանությունները, գրաբարյան բառերն ու կապակցությունները: Գրողը իր արհամարհական, ծաղրական վերաբերմունքն է արտահայտում ժամանակաշրջանի գրական միջակությունների նկատմամբ, մերկացնում է հանգապաշտների դատարկանտությունը, քննադատում է հայ բանաստեղծության մեջ տեղ գտած ձևամտությունները: Օրինակ. «Եղբայրն նախ չուզեր հավատալ. ասանկ գյուտի մը գյուտն անհնար կը քվի իրեն, բայց վերջապես կը համոզվի և եղբորը փաթովելով, Խորեն, կըսե, մեծ ծառայություն ըրիր ազգին այդ գյուտովդ, ազգը պարտավոր է երախտագետ մնալ քեզ համեմայն ավուրս կենաց յուրոց: Արդարև այդ գյուտը մեր ազգին համար ավելի մեծ նշանակություն ունի, քան գյուտ նշխարացը...»¹⁹:

Հակոբ Պարոնյանը մեծապատիվ մուրացկաններից մեկին՝ քահանային, խոսեցնում է գրաբար բառերով և, ստեղծելով կեղծ հանդիսավորություն, ծաղրում է նրան.

— Ողջոյն, Աբիսողոմ աղա:

— Օրհնյա՛, տեր հայր:

— Մեղավորս ձեր բարեպաշտության գալն իմանալով՝ աճապարանոք եկա ձեր ջերմեռանդության պատվական որպիսիությունը հարցնելու. ինչպե՛ս եք, Աբիսողոմ աղա:

— Աղեկ ենք:

— Միշտ աղեկ ըլլա՞ք, տեր Աստված ձեր մեռելոց արքայություն և կենդանյաց ավուրս երկարս պարգևեցե՛ք:

— Ծնորհակալ եմ, դուք ի՞նչպես եք, տեր հայր:

— Մեր աղեկությունը մի՛ հարցունեք... Ժամանակիս աղեկությունը... տեր Աստված գժեզ համեմայն փորձանագ և ի չարե ազատ պահեցե՛ք. ժողովուրդը երբ աղեկ ըլլա՞ քահանաներուն ալ երեսը կը խնդա...»²⁰:

Բացասական կերպարի խոսքի վերամբարձությունը և ճոռոմությունը, որ բնա-

¹⁷ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 127:

¹⁸ Հ. Պարոնյան, հ. 1, էջ 69:

¹⁹ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 12:

²⁰ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 26:

կան խոսքի առումով քնավ պատճառարանված ու տրամաբանական չէ, վկայում է նրա տգիտությունն ու կեղծությունը:

Պարոնյան երգիծաբանը կախման կետերի, տրոհության նշանների, երբեմն չակերտների օգնությամբ էլ յուրահատուկ հեզմական իմաստ է հաղորդում խոսքին: Օրինակ՝ «Այս քաղին մեջ գինետուն չկա և օղի ծախվիր արգիլված է... ի՞նչ դժբախտություն»²¹:

«Երեսուն աշակերտի համար երկու վարժարան... հառաջադիմության նշան չէ՞»²²:

«Միրն հայրդ ու մայրդ... եթե հարուստ են.

Միրն թշնամիներդ... երեսանց.

Սուտ մի՛ խոսեր... եթե շահ չունիս»²³:

Հերոսների դիմանկարները կերտելիս Պարոնյանը յուրաքանչյուրին պատկերում է նրա արտաքին և ներքին համարյա բոլոր մանրամասներով:

Հաճախ էլ նրա հզոր գրչի տակ մեկ քառույ, մեկ մակդիրով և մեկ համառոտ նախադասությամբ ստեղծվում են խիստ բնութագրական և ամբողջական կերպարներ:

Հակոբ Պարոնյանը լեզվական ուրույն մտածողության և երգիծական մեծ տաղանդի տեր ստեղծագործող է:

Н. ХАЧАТРИАН

ИРОНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ АКОПА ПАРОНЯНА

Резюме

Представляется ирония, как средство проявления сущности сатиры в произведениях А. Пароняна. Она проявляется приписыванием положительных качеств предметам, явлениям, что не присуще им. Создается несоответствие формы с содержанием, чем и делается ярче описываемый предмет.

NUNE KHACHATRIAN

IRONY IN HACOB PARONIAN'S WORKS

Summary

Heve is introduced the essence of irony as an expressive means of satire. Irony is characherized according referring the positive characteristics to the things and phenomena which arc not characteristic to them. There creates unconformity bet ween the form and the content according which the described thing becomes more expressive.

²¹ Հ. Պարոնյան, հ. 3, էջ 140:

²² Հ. Պարոնյան, հ. 3, էջ 218:

²³ Հ. Պարոնյան, հ. 2, էջ 17: